ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր,

աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս. Օհանյան

3 հունվարի 2022թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Սամվել Մարտիրոսի Բարսեղյանի

«Սոցիալ-իրավական պետության սահմանադրական մոդելի կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ

իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

(ԺԲ.00.02) ատենախոսության վերաբերյալ

Սոցիալական պետությունը, ծագելով մարդկության պատմության որոշակի շրջանում, հանդիսանում է պետության գործառնության ուրույն մակարդակ, որը ձևավորվում է որպես ժողովրդավարական իրավական պետության զարգացման նոր փուլ: Այս տեսակետից ժողովրդավարության ու իրավական պետության առկայությունը դիտարկվում են որպես նախապայման սոցիալական պետության գոյության ու գործառնության համար: Պետության սոցիալականության սկզբունքը իրավունքի գերակայության և ժողովրդավարական մասնակցության սկզբունքների հետ միասին հանդիսանում է ժողովրդավարական իրավական կարգի հիմքերից մեկը: Այստեղից էլ առաջ է գալիս ժամանակակից պետությունների բնութագրումը որպես սոցիալ-իրավական, որտեղ սոցիալականությունը ձեռք է բերում էական նշանակություն և կանխորոշում սահմանադրական զարգացումների ողջ համակարգն ու հետագա ընթացքը, նպաստում հասարակության ժողովրդավարացման ու մարդասիրացման (հումանիզացման) խորացմանը:

Ատենախոս Ս.Բարսեղյանն իր աշխատանքում, հաշվի առնելով վերը նշված մոտեցումը, պատշաճ գիտական մակարդակով նախ վերլուծել է իրավական պետության տեսության ձևավորման ու զարգացման վերաբերյալ պատմականորեն առկա և ներկայումս գոյություն ունեցող մեկնաբանությունները, էությունն ու ժամանակակից սահմանադրական ընկալումները, ապա՝ անդրադարձել է սոցիալական պետության բնույթին, վերջինիս սահմանադրական ամրագրմանն ու բնութագրական հատկանիշներին: Այնուհետև հեղինակը քննական վերլուծության է ենթարկել մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգն ու բովանդակային առանձնահատկությունները սոցիալ-իրավական պետությունում: Դրան զուգահեռ համակողմանիորեն վերլուծվել են սոցիալական պետության կայացման առկա հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, նախանշվել իրական սոցիալական պետության կայացման անհրաժեշտ քայլերը:

Ատենախոսության հիմնական նորույթը պետականության զարգացման երեք սերունդների հայեցակարգի առաջադրում է և սոցիալ-իրավական պետությունը որպես երրորդ սերնդի պետություն դիտարկելը:

Ատենախոսության նվաճումներից է նաև սոցիալ-իրավական պետության բնականոն գործունեության և հասարակության վերարտադրության համար անհրաժեշտ սկզբունքների, կառուցակարգի, գործիքակազմի (հասարակական հարաբերությունների սահմանադրականացման և սոցիալականացման), առաջադրումն ու դրանց ազդեցությունը մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանության վրա:

Նշված դրական բնութագրումների հետ մեկտեղ, մեր կարծիքով, աշխատանքում նկատվում են որոշ թերություններ, որոնք հանգում են հետևյալին՝

1. ատենախոսը թեմայի գիտական հետազոտության վիճակը ներկայացնելիս նշում է, որ քննարկվող թեման առավել խորն ուսումնասիրվել է ռուսական և եվրոպական իրավաբանական գրականության մեջ: Սակայն հետազոտության

տեսական մասը հիմնականում խարսխված է ռուս գիտնականների ուսումնասիրությունների և մեկնաբանությունների վրա,

2. «Գիտական նորույթ» բաժնի 5-րդ կետում սոցիալ-իրավական պետությունը դիտարկվում է որպես հանրային իշխանության կազմակերպման այնպիսի կառուցակարգ, որի հիմքում ընկած են ազատական գաղափարախոսությունը, իրավունքի գերակայությունը, սոցիալական շուկայական հարաբերությունները և մարդու ինքնավար ու նախաձեռնող կացութաձևը: Մինչդեռ սոցիալական պետության հիմնական տարրերից է նաև սոցիալական արդարությունը,
3. «Գիտական նորույթ» բաժնի 6-րդ և 11-րդ կետերում հեղինակի կողմից առաջադրված դրույթների գիտական նորույթն ամբողջությամբ հիմնավորված չէ,
4. ատենախոսության 88-րդ էջում հեղինակն անդրադառնում է այն խնդրին, որ բացառվում է հիմնական իրավունքների ուղղակի կիրառումը մասնավոր անձանց միջև: Այս հարցին անդրադարձել են նաև մի շարք հայ և ռուս հետազոտողներ (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը.-Եր.:Տիգրան Մեծ, 2016),
5. ատենախոսության որոշ էջերում առկա են տեխնիկական թերություններ ու վրիպակներ: Օրինակ՝ աշխատանքի 43-րդ էջում «մարդու իրավունքները և ազատություններն ամրագրող բաժինը» արտահայտության փոխարեն գրված է «մարդու իրավունքները ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ամրագրող բաժինը»: Աշխատանքի 52-րդ էջում գրված է «քաղաքատինեսություն» բառը՝ «քաղաքատնտեսության» փոխարեն: Նման վրիպակներ առկա են նաև 56-րդ, 60-րդ, 88-րդ էջերում:

Ամփոփելով կարելի է փաստել, որ բացահայտված թերություններն ունեն մասնակի բնույթ և էական ազդեցություն չեն թողնում աշխատանքի համակողմանի գնահատման հարցում: Աշխատանքը շարադրված է պատշաճ գիտական

մակարդակով, պարունակում է իրավամտածողության արդի միտումներն արտացոլող դրույթներ, կարող է օգտակար լինել իրավունքի տեսությունն ուսումնասիրող մասնագետների և դրանով հետաքրքրված այլ անձանց համար:

Եզրակացություն. Սամվել Մարտիրոսի Բարսեղյանի «Սոցիալ-իրավական պետության սահմանադրական մոդելի կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ աշխատանքը բավարարում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգային պահանջներին: Դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Գրախոսվող ատենախոսությունը քննարկվել է Եվրասիա միջազգային համալսարանի «Իրավագիտության» ամբիոնի 2022 թվականի հունվարի 3-ի նիստում, որին ներկա էին՝ ամբիոնի վարիչի տեղակալ Ն.Ջոմարդյանը, օգնական Լ.Թևոսյանը, դասախոսներ՝ ի.գ.թ. Ի.Իսկանդարյանը, ի.գ.թ. Ա.Այվազյանը, ի.գ.թ. Գ.Իսրայելյանը, ի.գ.թ. Մ.Հակոբյանը, ի.գ.թ. Ն.Աքիլյանը, փ.գ.թ. Ե.Մանուկյանը, Ա.Չոբանյանը, Մ.Շահբազյանը, Ք.Մինասյանը:

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ Ն.Ջոմարդյան